

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, եւ _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն՝ որպես սեփականություն, Փոխառուին է հանձնում դրամական միջոցներ՝ _____ (_____) չափով՝ Փոխառուի կողմից, թիվ 1 հավելվածի համաձայն, հիմնական միջոցներ (այսուհետ՝ Հիմնական միջոցներ) ձեռք բերելու համար, իսկ Փոխառուն պարտավորվում է Փոխատուին վերադարձնել նույն չափի դրամային գումար (այսուհետ՝ Փոխառության գումար):

1.2. 1.1 կետում նշված Փոխառության գումարը Փոխառուին է տրամադրվում _____ ժամկետով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխատուն պարտավորվում է սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցները Փոխառուին տրամադրել սույն պայմանագրի ստորագրման պահից սկսած _____ օրվա ընթացքում դրամական միջոցների ստացման ակտի կազմամբ և ստորագրմամբ, որում նշվում են՝ ակտը կազմելու օրը և վայրը, կողմերի անվանումները, Փոխառուի հաշվին դրամական միջոցներն ստանալու օրը, Փոխառուի հաշվին ստացված դրամական միջոցների գումարը, կողմերի ստորագրությունները:

2.2. Փոխառության տրամադրման օր է համարվում ակտի ստորագրման օրը:

2.3. Փոխատուն իրավունք ունի վերահսկել Փոխառուի կողմից ստացված դրամական միջոցների օգտագործումը:

2.4. 1.2 կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո Փոխառուն պարտավորվում է վերադարձնել սույն պայմանագրով Փոխատուից ստացված փոխառության գումարը սույն պայմանագրի 2.6 կետում սահմանված կարգով ու պայմաններով:

2.6. Ստացված փոխառության գումարը Փոխառուն վերադարձնում է ոչ ուշ, քան սույն պայմանագրի 1.2 կետում նշված փոխառության ժամկետը լրանալու հաջորդ օրը:

Փոխառության գումարի հետ միաժամանակ Փոխառուն փոխանցում է նաև տոկոսների գումարը՝ դրամական միջոցների օգտագործման ամբողջ ժամանակահատվածի համար _____ տոկոս հաշվարկով:

2.7. Փոխառուին փոխառության գումարի վերադարձման, այսինքն՝ Փոխառուի պարտավորությունների կատարման օր է համարվում Փոխատուի կողմից դրամական միջոցներն ստանալու օրը:

2.8. Փոխառուն իրավունք ունի Փոխառուի համաձայնությամբ փոխառության գումարը վերադարձնել մինչև սույն պայմանագրով սահմանված վերադարձման ժամկետը լրանալը՝ վճարելով նաև փոխառության տոկոսները՝ ելնելով դրամական միջոցների օգտագործման փաստացի ժամկետից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.2. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ, գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

3.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Փոխատու

ստորագրություն

Փոխառու

ստորագրություն